

**ԱՐՑԱԽԻ ՀԱՅԱԳԻՐ ԴՊՐՈՑԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ
ՁԱՐԳԱՑՄԱՆ ՇՐՋԱՆՆԵՐԸ**

Գրիշա Հարությունյան

Մանկավարժական գիտությունների դոկտոր

ԱրՊՀ

Պատմական Արցախի բազմադարյան հարուստ մշակութային ժառանգության անբաժանելի մաս կազմող դպրոցն ունի փառահեղ էջեր: Բոլոր ժամանակներում էլ հայ ժողովրդի արևելյան հատվածի՝ Արցախի հայագիր դպրոցներում կրթությունը դիտվել է որպես ազգային ինքնուրույնության դրսևորման և գոյապահպանման կարևորագույն գործոն:

Հայ դպրոցի պատմությունն ուսումնասիրողներին, պատմաբաններին, բանասերներին, հայագետներին, մանկավարժ-պատմաբաններին (Լեո, Մ. Աբեղյան, Հ. Մանանդյան, Ա. Աբրահամյան. Ալ. Երիցյան, Աբ. Մովսիսյան և շատ ուրիշներ) հետաքրքրել է այն հարցը, թե գրերի գյուտից առաջ Հայաստանի արևելյան հատվածում՝ Արցախում ինչ տիպի դպրոցներ են գործել «մի գուցե և չեն գործել», ինչպես պնդում են խորհրդային շրջանում հայ դպրոցի պատմությունը ուսումնասիրողներից շատերը: Անշուշտ, ժամանակի քաղաքական բարդ իրավիճակում, երբ ամեն կերպ ձգտում էին խաթարել ազգային համախմբման գործընթացը, որոշ մանկավարժ-պատմաբաններ, պատմաբաններ երբեմն շեղվում էին իրենց հետազոտություններում բացահայտել ճշմարտությունը և ներկայացնել հայագիր՝ այդ թվում Արցախի դպրոցի ամբողջական պատմությունը հնագույն շրջանից մինչև մեր օրերը: Հարկ է նշել, որ տողերիս հեղինակն իր աշխատությունում («Ժողովրդական կրթության զարգացումը Լեռնային Ղարաբաղում», «Լույս» հր., 1985թ.) նույնպես խուսափում էր ամբողջական ներկայացնել Արցախի դպրոցի հազարամյա պատմությունը: Վերստին ընդգծենք, որ տողերիս հեղինակը քննարկվող հիմնահարցի վերաբերյալ հրատարակել է աշխատություններ, մեթոդական ձեռնարկներ: Սակայն, մեր ուսումնասիրության նպատակն է նորահայտ արխիվային վավերագրերի տպագիր սկզբնաղբյուրների, պարբերական մամուլում հրատարակված հոդվածների հիման վրա (ժամանակին հնարավոր չի եղել մեզ մոտ եղած փաստագրական տվյալները ամբողջացնել դպրոցի պատմությունը ընդհանրացնող աշխատությունում) գիտական տեղեկագրի շրջանակներում ընթերցողին ամբողջական պատկերացում տալ Արցախի դպրոցի զարգացման պատմաշրջանների մասին:

Երկարամյա մեր ուսումնասիրությունները գիտական անհերքելի տվյալներով հաստատում են այն իրողությունը, որ 4-րդ դարից սկսած՝ Արցախի կրթության գործի ուսումնասիրությունը ունի հաստատուն պատվանդան և հիմնված չէ կռահումների կամ ենթադրությունների վրա, այլ՝ մատենագրական և օտար աղբյուրների վկայությունների ու տվյալների վրա:

Համաձայն այս վկայությունների՝ 4-րդ դարից սկսած, Արցախում գործող դպրոցները եղել են հունական, ասորական, Հայաստանի առաջին բաժանումից հետո (387 թ.)՝ պարսկական:

Այսպես, Հայաստանի ԳԱԱ Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի ավագ գիտաշխատողը աշխատության մեջ վկայելով¹ Անտուան Սեյեի աշխատության փաստերը, մատնանշում է, որ հունաբան հայերենի մեջ նկատելով Հայաստանի հյուսիսարևելյան շրջանին հատուկ քերականական մի քանի առանձնահատկություններ՝ ենթադրվում է, որ հունաբան դպրոցները գործել են Հայաստանի հյուսիսարևելյան կողմերում՝ Արցախում, Սյունիքում և Փայտակարանում: Պատմական այս իրողության օգտին խոսում են Հայաստանում և Արցախում գտնված հուշարձանները, հայ թագավորների և իշխանների անունով մնացած դրամները, ինչպես նաև հայ և օտար պատմիչների վկայությունները:

Ազաթանգեղոսը՝ Գրիգոր Լուսավորչի կենսագիրն ու հայոց հավատի արմատավորման առաջին պատմիչը, նշում է, որ հայ գրերի գյուտից առաջ հայ սերունդը Մեծ Հայքի նահանգներում, այդ թվում՝ 10-րդ նահանգում՝ Արցախում գործող դպրոցներում սովորում էր հունարեն, ասորերեն, իսկ հետո՝ պարսկերեն²:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ Արցախում լուսավորական շարժումը ծավալվում է հատկապես, քրիստոնեության շրջանում: Գրիգոր Լուսավորիչը շարունակելով հայության քրիստոնեացման անհետաձգելի գործը, որը սկսել է Եղիշե Երանելին Արցախի կենտրոնական մասում՝ Հաբանդ գավառում կառուցում է հայոց երկրի առաջին եկեղեցիներից մեկը՝ պատմական Արցախի առաջին լուսավորության օջախը, ուր մինչև մեսրոպյան գրերի ստեղծումն ու հայեցի կրթություն տվող դպրոցի հիմնադրումը անընդմեջ գործել են օտարալեզու դպրոցներ: Այստեղից է սկսվում Արցախի դպրոցի բազմադարյան պատմությունը, որն ունեցավ իր հետագա զարգացման շրջանները:

¹ Ա. Ն. Մուրադյան, Հունական դպրոցը և նրա դերը հայերենի քերականության տերմինաբանության ստեղծման գործում, Եր., 1971, էջ 76:

² Ազաթանգեղոս, Պատմություն հայոց, Տփղիս, 1909, էջ 437:

Հայ ժողովրդի բազմադարյան պատմության ամենախոշոր իրադարձություններից մեկը (քրիստոնեության ընդունումից հետո) եղավ հայ գրերի ստեղծումն ու հայագիր դպրոցի հիմնադրումը: Հայ ժողովուրդը գիրն ու դպրոցը դարձրեց ազգապահպանման հզոր զենք, իր գոյության մաքառման անպարտելի դրոշ:

Ականավոր պատմագիր Մովսես Կաղանկատվացու հավաստի տվյալներով¹ մեծն Մաշտոցը հայոց կաթողիկոս Սահակ Պարթևի գործուն աջակցությամբ ձեռնամուխ է լինում նորաստեղծ հայագիր դպրոցների ցանցի ընդլայնմանը Արևելյան Հայաստանի նահանգներում, լինում է Արցախում, հիմնում հայեցի կրթություն տվող առաջին դպրոցը Հաբանդ գավառի Ամարաս վանքում: Առաջին ուսուցիչն էլ եղել է ինքը՝ Մաշտոցը: Իսկ սքանչելի Կորյունը ասում է. այնուհետև Մաշտոցը հայ գիրը գործածության մեջ է դրել նաև Արևմտյան Հայաստանում, ուր ապրում էր «մյուս կես ազգն հայոց»²:

Այսպիսով, Գրիգոր Լուսավորիչն ու Մեսրոպ Մաշտոցն իրենց գործունեության լուսավոր շղթայի մեջ են առել Ամարասը, որը դարձել է Արցախի կրթատունն ու հոգևոր ներշնչարանը: Այստեղից է սկսվել հայոց տառերի հոգեկրթիչ ու հայակրթիչ արշավը Հայոց Արևելից կողմանց բոլոր գավառներում:

Հետագա ժամանակներում հայոց Արցախական աշխարհի դպրոցական կյանքում զգալի տեղաշարժեր են կատարվում Արցախ-ուտիքյան հայաշխարհի փոքրիկ թագավորության հիմնադիր Վաչագան Բարեպաշտի ժամանակներում: Անուրանալի են Բարեպաշտի ձեռնարկումները՝ Հայոց Արևելից կողմանց գավառներում, հատկապես՝ դպրոցաշինության ասպարեզում: Աղվեճի հայտնի եկեղեցական ժողովում ընդունած կանոնի («Սահմանադրութիւն կանոնանակ», հայերեն հնագույն օրենքների ժողովածու, 21 կանոններից 18-րդը վերաբերում է կրթությանը) համաձայն՝ «Հայոց Արևելից կողմանց տերութեան առաջին օրենքն այն պետք է լինի, որ բոլոր մարդիկ սովորեն հայերեն գրելն ու կարդալը», ընդլայնվում է դպրոցների, ինչպես արքան է ասում, կրթատների ցանցը: Անվանի պատմաբան Բ. Ուլուբաբյանը իրավացիորեն նշում է³, որ Արցախյան հայաշխարհի այս ռազմաքաղաքական վարչական ժամանակաշրջանում վերելք է ունեցել լուսավորական գործը՝ Վաչագան Բարեպաշտի թագավորության շրջանում: 6-7-րդ դարերում, չնայած ճգնաժամային շրջանին, Արցախական հայաշխարհում

¹ Մովսես Կաղանկատվացի, Պատմություն Աղվանից աշխարհի, գլուխ 27, Թիֆլիս, 1913, էջ 26:

² Գրիգորյան, Գ. Հրությունյան. Արցախի դպրոցը հնագույն շրջանից մինչև մեր օրերը, «Ձանգակ», 2005, էջ 23:

³ Բ. Ուլուբաբյան, Խաչենի իշխանությունը 10-16-րդ դարերում, Երևան, 1975, էջ 61:

շարունակվում են Վաչագան Բարեպաշտի լուսավորական ձեռնարկումները հոգևոր-մշակութային կյանքի վերափոխումների ոլորտներում: Բ. Ուլուբաբյանը վկայում է, որ երկրամասի ներքին կյանքում Իշխան Ջիվանշիրը (գահակալել է 637-683թթ.) անշեղորեն հետևում է Վաչագան Բարեպաշտի օրինակին, ամրապնդում տնտեսական իրավական կարգը, կիրառում հայոց լուսավորչական հավատի սկզբունքները, Արցախի վանքերի եկեղեցիներին կից բացում դպրոցներ, որտեղ սովորում են բազմաթիվ հայ պատանիներ:

8-9-րդ դարերում՝ պատմական անբարենպաստ իրավիճակներում իրենց գոյությունը շարունակում են պահպանել Դադի, Ս. Յակոբ, Գտիչ վանքերում գործող կրթօջախները: Ազգային մշակույթի, դպրոցի պահպանման ու բարգավաճման ոգին բարձր էր Արցախի ժողովրդի մոտ. ամենաօրհասական պահին անգամ նա չի կորցրել հոգու արիությունը և մտքի սլացքը:

Արցախական աշխարհում դպրոցական գործը լայն թափ ստացավ հատկապես 10-12-րդ դարերում՝ հայկական վերածննդի դարաշրջանում: Վերածնունդն իր բարերար ազդեցությունն է թողնում նաև դպրոցի վրա: Սկսվում է ուսումնական հաստատությունների աստիճանական աշխարհականացում, որոշակի մերձեցում կյանքին, ուժեղանում է հետաքրքրությունը դեպի բնական և մաթեմատիկական գիտությունները, լեզուների ուսումնասիրությունը: Այդ բնագավառում անուրանալի են արցախցի սկանավոր գիտնական, մանկավարժ Յովհաննես սարկավազ Իմաստասերի ծառայությունները: Անվանի հայագետ Մանուկ Աբեղյանը «Յովհաննես սարկավազ Իմաստասերը» գրքում նշում է, որ հայ մանկավարժության պատմության մեջ սարկավազը բացառիկ դեմք էր, կրթական գործի բարենորոգիչ, նոր դպրոցի հիմնադիր, մանկավարժական մտքեր հղացող, Շիրակացուց հետո ամենախոշոր դեմքը բնագիտամաթեմատիկական գիտությունների ասպարեզում: Որպես ուսուցիչ, ուսուցչապետ աշխատել է Անիի, Յաղպատի, Արցախի թեմի դպրոցներում, բարելավել ուսումնադաստիարակչական աշխատանքների գործը: Քննարկվող ժամանակաշրջանում Արևելյան Հայաստանում, Արցախական աշխարհի դպրոցական կյանքում կատարվող դրական տեղաշարժերը, բարենորոգումները պայմանավորված էին համեմատաբար երկարատև խաղաղ ժամանակաշրջանով: Հայ դպրոցի պատմությանը նվիրված ուսումնասիրություններում, պատմագիտական աղբյուրներում հիշատակվում է նաև, որ 5-12-րդ դարերում՝ ներառյալ 13-րդ դարի սկիզբը, արևելահայերի՝ պատմական Արցախի դպրոցական գործի վիճակը բավարար հիմքի վրա էր դրված՝ հայերի ազգային համախմբման շնորհիվ:

13-15-րդ դարերում պատմական Արցախն ընկնում է նոր նվաճողների՝ մոնղոլ-թաթարների, թուրքմենական վաչկատուն վայրագ ցեղերի ծանր լծի տակ: Քաղաքական այդ ծանր պայմաններում արցախահայերը կյանքի գնով պահպանել ու զարգացրել են իրենց դարավոր մշակույթը, այդ թվում նաև՝ իրենց դպրոցն ու կրթական մյուս հաստատությունները:

Այսպես, 12-13-րդ դարում Արցախում առաջանում են իշխանական մի շարք նոր տներ, որոնք մեծ դեր են խաղում երկրի պատմության մեջ:

Բ. Ուլուբաբյանը, «Արցախի պատմություն», «Խաչենի իշխանությունը 10-16-րդ դարերում», աշխատություններում վկայում է¹, որ այդ իշխանական տներից Արցախում հայտնի են երեք իշխանությունները՝ Ներքին Խաչեն, Միջնարցախ կամ Հաթերք և Վերին Խաչեն: Այս երեք իշխանություններում իրենց հայրենասիրությամբ ու սխրագործություններով, մշակութային, լուսավորական ազգանվեր ձեռնարկումներով հայտնի են եղել կին գործիչների Խորիշահը (Ներքին Խաչենի տեր Վախթանգ Տանգիկի կինը), Դոփին (Վերին Խաչենի կամ Ծարի տեր Հասանի կինը), Արզու Խաթունը (Միջնարցախի տեր Վախթանգի կինը):

Իշխանուհի Խորիշահը ակտիվ կերպով մասնակցել է երկրի շինարարության զանազան մեծ ու փոքր կառուցումներին և խոշոր նշանակություն ունեցող բարեգործական ձեռնարկումներին: Նա զբաղվել է նաև երեխաների դաստիարակությամբ ու կրթությամբ: Մատենադարանի մի ձեռագրում (թիվ 387, թիվ 308 ա. բ) նշված է, որ Վախթանգի և Խորիշահի կողմից գրվել է մի Ավետարան հիշատակարան, որտեղ խոսվում է այն մասին, որ Վախթանգն ու Խորիշահը կառուցել են եկեղեցի, նրան կից բացել դպրոց:² Խոսքը Մեծառանք գավառի եպիսկոպոսանիստ Սուրբ Հակոբ վանքի մասին է, որ Խոխանաբերդի ճյուղի հոգևոր-մշակութային կենտրոններից է եղել, Վարդան Հացունին «Հայուհին պատմութեան առջև» (Վեներտիկ, էջ 36, էջ 109) աշխատությունում գրում է, որ իր կյանքի վերջին տարիներին հիմնում է օրիորդաց դպրոց, սովորեցնում ձեռագործության արվեստը և այդ արհեստով էր ապրում տիկին Խորիշահը, որի մասին ասում են, թե «ինքը ձեռագործով իւրով կերակրէր»:

Խաչենի շնորհալի կանանց լուսավորական գործունեության մասին Վարդան վարդապետ պատմիչը գրում է. իշխանուհի Դոփին մասնակցելով ճարտարապետական կառույցներին՝ Հովհաննես եպիսկոպոսի նախաձեռնությամբ հավաքում է ձեռագիր մատյանները, հիշատակարանները, եկեղեցական գրքերն ու ավետարանները և Վաղուհասից արևմուտք գտնվող Խոթա վանքի (1204թ.) համալիրում հիմնում մատենադարան, վանքին կից բացում են նաև դպրոց:

¹ Բ. Ուլուբաբյան, *Նշվ. աշխատություն*, էջ 62-63:

² Մ. Բարխուդարյան, *Արցախ*, 1895, էջ 171:

Որպես ուսուցչուհի-ուսուցչապետ հայտնի էր տիկին Արզու Խաթունը՝ իր հիմնած դպրոցներով, լուսավորական բարենորոգումներով: Կիրակոս Գանձակեցի պատմիչը գրում է «Նա ուներ նկարակերտութեան ու ոստայնանկութեան հանճար, տաղանդաւոր արուեստագիտուհուն տեսնում ենք վարագույրներ հրաշակերտելիս հրաշակերտուհիների հետ, որոնք ինքը կրթել, դաստիարակել է...»¹:

Հետագայում հայրենասեր կանանց լուսավորական գործունեությունը շարունակել է նաև Խաչենի Մամքանի դուստր Մամախաթունը:

Այդ ժամանակաշրջանում արցախցի կանանց համար հանրային համակարգի կրթության բացակայության դեպքում անջատ ու երկսեռ դպրոցներ չունենալու, կյանքի բազմաթիվ բնագավառներում իրենց դրսևորելու համար պարտական են տնային կրթությանը. տնային դպրոցները հայոց կրթության համակարգում մեծ դեր են խաղացել և երբեմն էլ՝ նույնիսկ երկար ժամանակ, փոխարինել են հասարակական ու պետական դպրոցներին: Նույնիսկ՝ երբ Հայաստանի, Արցախի ամենածանր պայմաններում քայքայվում էին դպրոցները, երբ երկիրը հեծում էր նվաճողների ծանր լծի տակ, աճում էին «մանր դպրոցները»² և «իմաստնոց տները»:

Հավաստի աղբյուրների համաձայն՝ 13-րդ դարում մշակութային, շինարարական լուսավորական գործը վերելք է ապրում Հասան Ջալալյանի (Վախթանգ Տանգիկի ավագ որդու) իշխանության ժամանակաշրջանում: Գանձակը դարձավ Արցախական աշխարհի ազատագրական շարժումների, գրական շարժումների, հոգևոր-մշակութային և լուսավորության խոշոր կենտրոն: Հայտնի էր իր դպրատներով, կրթօջախներով, հարուստ մատենադարանով, որի ձեռագրերից շատերն այսօր պահպանվում են ՀՀ Ազգային մատենադարանում:

Արցախի քաղաքական կյանքի ծանր կացությունը հարատևել է մինչև 18-րդ դարի վերջը: Անբարենպաստ պայմաններ էին ստեղծվել, հատկապես, թուրք-պարսկական տևական նվաճողական պատերազմների շրջանում: Կրթական գործը, մշակութային, հասարակական մտքի հետագա զարգացումը լուրջ վտանգ էր ապրում, ժողովուրդը զրկված էր տնտեսական և մշակութային զարգացման նվազագույն հնարավորությունից: Նման իրադրության մեջ ահա Արցախի կրթական օջախները կենաց ու մահու գոտենարտում մաքառում էին և պահում իրենց կենսահաստատությունը մինչև 19-րդ դարը:

¹ Կիրակոս Գանձակեցի, Պատմություն հայոց, 1858, էջ 202:

² Ա. Բ. Մովսիսյան, «Ուրվագծեր հայ դպրոցի և մանկավարժության պատմության», Երևան, 1958, էջ 72-74:

Պատմական այդ ժանր ժամանակաշրջանում, Ռուսաստանին միանալուց հետո, նպաստավոր պայմաններ ստեղծվեցին երկրամասի տնտեսության, մշակույթի, դպրոցական կյանքի զարգացման համար: 19-րդ դարի առաջին կեսին, ինչպես բնութագրում է Մ. Սանթրոսյանը, «Արևելահայ դպրոցը 19-րդ դարի առաջին կեսին» աշխատությունում¹, համարվում է արևելահայ, այդ թվում՝ Արցախի նոր դպրոցի կազմավորման շրջան: Գնալով ընդլայնվում է նոր տիպի դպրոցների ցանցը: Արխիվային տվյալները վկայում են² (ՀԱԱ, ք. 9, գ. 19, գ. 56, գ. 78), որ 1800-1820թթ. դպրոցներ են բացվում Գանձասարում, Երից Մանկանց վանքում, Նուխիի հայկական թեմում: 1821թ. Մ. Թաղիադյանը Եփրեմ կաթողիկոսի հետ այցելելով Շուշի, բացում է մասնավոր դպրոց, իսկ ժամանակի հայտնի լուսավորիչ Յովսեփ Արցախեցին դպրոց է բացում Ս. Հակոբ վանքում և Դադիվանքում: Արխիվային մեկ այլ փաստաթուղթ վկայում է, որ 1827թ. Արցախի դպրոցական կյանքում սկսվում է մի նոր տեղաշարժ. Շվեյցարիայի Բազել քաղաքի միսիոներները գալով Շուշի՝ հիմնում են ուսումնարան սկիզբ դնում տպագրական գործին:

Նրանց ուսումնարանում սովորում է 130 աշակերտ, դասավանդում՝ 5-6 ուսուցիչ: Արցախի դպրոցի պատմության մեջ 5-19-րդ դարի սկիզբը այս ուսումնարանը առաջին բարձր տիպի դպրոցն է իր աշակերտական կազմով ու բարձրորակ ուսուցիչներով՝ Յովսեփ Արցախեցին, համբավավոր գիտնական մանկավարժ Պողոս վարդապետ Ղարաբաղցին և ուրիշներ:

Արցախի դպրոցական համակարգում որոշակի փոփոխություն է կատարվում, հատկապես 1836թ. մարտի 11-ին կառավարության կողմից հայկական դպրոցների վերաբերյալ առաջին պաշտոնական կանոնադրության ընդունումից հետո (պատմության մեջ հայտնի «Պոլոժենիե» անվամբ): Այդ կանոնադրության համաձայն՝ Արցախի հոգևոր-մշակութային կենտրոն Շուշի քաղաքում 1838թ. հունիսի 22-ին բացվում է Ղարաբաղի հայոց հոգևոր թեմական դպրոցը՝ Արցախի բարձրագույն կրթության առաջնեկը, իհարկե, ժամանակի առումով: Բացի թեմական դպրոցից, Շուշի քաղաքում գործում էր 1830 թվականից բացված ռուսական տիպի գավառային ուսումնարանը, 1837թ. Բաղդասար Միտրոպոլիտ Հասան Ջալալյանի հիմնած հոգևոր ուսումնարանը: Ալ. Երիցյանի «Պատմություն 75-ամյա գոյության Ներսիսյան դպրոցի» աշխատությունում մատնանշում է, որ 19-րդ դարի առաջին կեսին Արցախի թեմում գործել են

¹ Մ. Սանթրոսյան, «Արևելահայ դպրոցը 19-րդ դարի առաջին կեսին»:

² ՀՊԱ, կար. դիվ., ք. 78, ք. 9:

20-ից ավելի հայկական դպրոցներ, իսկ Նուխի գավառում (այն ժամանակ Նուխին մտնում էր Արցախի թեմի մեջ)՝ 18 կրթական օջախներ:

19-րդ դարի 2-րդ կեսին արևելահայ հատվածում սոցիալ-տնտեսական հարաբերությունների որոշ առաջընթացը շոշափում էր նաև հոգևոր կյանքի ոլորտը: Նոր խնդիրներ ու պահանջներ են առաջադրվում նաև ժողովրդական լուսավորության ասպարեզում: Արցախի ժողովուրդը ևս մոտիկից հաղորդակացվում է արևելահայ հատվածում տեղի ունեցող սոցիալ-քաղաքական ու հասարակական տեղաշարժերին:

Արցախի դպրոցի պատմության զարգացման այս շրջանում ասպարեզ են մտնում Ռուսաստանում և Եվրոպայում մանկավարժություն առած պրակտիկ մանկավարժներ Պ. Շանշյանը, Պ. Պռոշյանը, Ղ. Աղայանը, Ս. Մանդինյանը, Խ. Ստեփանյանը, Ն. Տեր Ղևոնդյանը, Լևոն Սարգսյանը, Մ. Աբեղյանը, Յր. Աճառյանը և շատ ուրիշներ, որոնք իրենց հարուստ փորձով թարմություն մտցրին Արցախի դպրոցի ներքին կյանքում¹:

Ուշագրավ է հատկապես Պետրոս Շանշյանի, Պերճ Պռոշյանի, Մարիամ Հախումյանի գործունեությունը Շուշիի բարեկարգ օրիորդաց դպրոցի հիմնադրման գործում (1864թ.): Ի դեպ, նշենք, որ դարի երկրորդ կեսին Ղարաբաղի առաջին օրիորդաց դպրոցը հիմնել է տիկին Եղիսաբեթ Սարգսյանը՝ 1867թ., Շուշիում, որի շրջանավարտներից էր Արցախի հայտնի լուսավորիչ մանկավարժ, գեղանկարչուհի Մարգարիտ Ալեքսանյանը (1838-1902):

Պաշտոնական տվյալների համաձայն՝ Արցախի կրթական համակարգում առանձնահատուկ տեղ է գրավում Շուշիի ռեալական ուսումնարանը (1887թ.), որն իր 40-ամյա գոյության տարիներին սերտ կապերով կապված էր թեմական և օրիորդաց դպրոցների, ինչպես նաև հայ լուսավորչական մյուս թեմերի (Երևանի, Նոր Նախիջևանի, Աստրախանի, Վրաստանի, Բաքվի (Շամախի-Ղերբենդի) ուսումնական հաստատությունների, Մոսկվայի Լազարյան ճեմարանի հետ: Ինչպես թեմական դպրոցը, այնպես էլ Շուշիի ռեալական ուսումնարանը կարևոր դեր խաղացին արցախահայ ժողովրդի հասարակական-քաղաքական և մշակութային կյանքի զարգացման, մատաղ սերնդի կրթության ու դաստիարակության գործում: Արցախահայ դպրոցի պատմության ուսումնասիրությունը հիմք է տալիս եզրակացնելու, որ այդ ժամանակահատվածում թեմի հայկական դպրոցների հիմնական տիպերն էին՝ ծխական, հոգևոր, եկեղեցական-ծխական, իզական, թեմական դպրոցները և ռեալական ռուսական տիպի ուսումնարանը:

¹ Գ. Հարությունյան, Արցախի դպրոցը 5-րդ դարից մինչև 20-րդ դարի սկիզբը, 2002թ. էջ 146:

Ժողովրդին լուսավորելու ձգտումը ստիպեց հայ գործիչներին՝ աստիճանաբար դպրոցները մոտեցնել այն վայրերին, ուր ապրում էր ժողովրդի հիմնական զանգվածը: Շուշիում հրատարակված «Հայկական աշխարհ», «Քնար խոսնակ», «Գործ», «Ազգագրական հանդես» պարբերականներում լույս տեսած բազմաթիվ հոդվածներից և այլ նյութերից տեղեկանում ենք, որ գնալով ակտիվանում էր ժողովրդի հասարակական նախաձեռնությունը նոր դպրոցների (միդասյան, երկդասյան, երկսեռ) ստեղծման ուղղությամբ: Եվ պետք է ասել, որ ցարիզմի լուսավորական-դպրոցական հետադիմական քաղաքականության անբարենպաստ պայմաններում (որի ազդեցությամբ 1896-1905թթ. փակվել են հայկական դպրոցները) անգամ Արցախի թեմում կառավարությունից գաղտնի գործել են հայկական դպրոցները:

1906-1907 ուսումնական տարում Արցախի թեմում գործում են 60-ից ավելի միդասյան, երկդասյան դպրոցներ: Արցախի դպրոցների ընդհանուր վիճակի, փոփոխվող ուսումնական պլանների, ծրագրերի ու դասագրքերի և դպրոցի ներքին կյանքին առնչվող այլ հարցերի մասին պարբերաբար հաղորդումներ է տալիս 1910թ. Շուշիում Մելքոն Բաբաջանյանի տպարանում հրատարակված «Ղարաբաղ» թերթը: Դպրոցական կյանքում զգալի տեղաշարժ է կատարվում հատկապես Առաքել Առաքելյանի տեսչության (1911-1913թթ.) շրջանում. բարելավվում է ուսումնադաստիարակչական աշխատանքների կազմակերպման գործը, դպրոցներն ապահովվում են բարձրորակ ուսուցչական կադրերով: Այդ շրջանում Արցախի դպրոցական գործի բարելավման ուղղությամբ հսկայական աշխատանք են տանում հայրենասեր գործիչներ Լևոն Վարդունին, Աշոտ Յովհաննիսյանը, Ալ. Ծատուրյանը, Լ. Աթաբեկյանը, Գր. Ներսիսյանը, Ս. Տեր Մինասյանը և շատ ուրիշներ:

Չնայած ազգային ճնշման քաղաքականությունը այս կամ այն չափով արգելակում է ժողովրդական կրթության առաջընթացը, այնուհանդերձ, որոշակիորեն կարգավորվում է դպրոցական գործը և պահպանում իր գոյությունը մինչև խորհրդային շրջանը: Իսկ ժողովրդական ուսուցիչները մեծ մաքառումներով ու անձնվիրաբար շարունակել են կրթել ու դաստիարակել հայ մանուկներին:

Խորհրդային իշխանության տարիներին Արցախի ժողովուրդը հայտնվեց նոր փորձությունների ոլորտում: 70 տարիների ընթացքում արցախահայերը զրկված լինելով անկախությունից, ազատ մտածելակերպից, ենթարկվելով ազգահալած ստորացուցիչ քաղաքականությանը՝ երբեք չեն կորցրել հավատն ու հույսը լուսավոր ապագայի նկատմամբ, նրա առաջադեմ մտավորականությունը հայ սերնդին ավանդել է անգամ այդ

պայմաններում աչքի լույսի պես պահպանել նախնիների ստեղծած հոգևոր արժեքները՝ հանուն ազգային գոյատևման ու անկախության, որին նա խորապես ու սրբությամբ հավատացել է:

Անժխտելի է, որ խորհրդային իշխանության տարիներին Լեռնային Ղարաբաղի ժողովրդական կրթության զարգացման ասպարեզում շոշափելի նվաճումներ ենք ունեցել: Անհամեմատ (նախախորհրդային շրջանի) մշակույթի, գիտության, արվեստի, դպրոցի զարգացման համար բարենպաստ պայմաններ են ստեղծվել և ոչ միայն Ադրբեջանի իշխանությունների, այսպես կոչված, «կեղծ մտահոգության», այլև մայր Հայաստանի անգնահատելի օգնության, Արցախի ազատատենչ ժողովրդի, նրա անձնագրի մտավորականության (որոնցից շատ-շատերին արտաքսել են իրենց բնիկ երկրամասից) համառ ջանքերի ու սխրագործությունների շնորհիվ, ինչը այսօր անտեսել մենք չենք կարող:

Խորհրդային իշխանության եռամյա օրենսդրական նվաճումները մի ակտով տարածվում են Հայաստանի (1920թ. նոյեմբեր), Ադրբեջանի լուսժողկոմատների վրա (1920թ. ապրիլ):

Ինքնըստինքյան հասկանալի է, որ Լեռնային Ղարաբաղում խորհրդային իշխանության հաստատումից հետո (բռնակցում Ադրբեջանին, 7-ին հունիսի, 1920), օրենսդրական ուժ են ստանում Ադրբեջանի կենտգործկոմի լուսժողկոմատի որոշումները, կրթության, կազմակերպման մասին դեկրետները և պարտադիր կերպով իրականացվում էր ԼՂ նորաստեղծ լուսժողկոմատի կողմից, մասամբ իրականացվում էր միայն Հայաստանի լուսժողկոմի որոշումը՝ ուսուցումը մայրենի լեզվով տանելու վերաբերյալ, այն էլ՝ մեծ դժվարություններով:

Պաշտոնական տվյալների համաձայն՝ 1923թ. օգոստոսի 1-ից ԼՂ կուսժողկոմը ղեկավարում է Շուշիի ռեալական ուսումնարանի շրջանավարտ, ականավոր քաղաքական գործիչ, մանկավարժ Արշավիր Քամալյանը, իսկ նրա տեղակալն էր Առաքել Առաքելյանը (ԼՂԳ արխիվ, թիվ 10, ց. 1, թիվ 5, ցավոք, այժմ այդ արխիվը չկա, վառվել է, այդ և այլ տվյալներ վերցվել են մինչև 88-ի Շարժումը):

Հենվելով Հայաստանի կրթական համակարգում ձեռք բերած եռամյա փորձի վրա (1920-1923թթ.) ԼՂ կուսժողկոմը հրապարակում է որոշումներ, որտեղ շարադրված էին ժողկրթության բնագավառում ինքնավար մարզի հեղկոմի հիմնական սկզբունքներն ու խնդիրները: Սկզբնական շրջանում մարզում ստեղծվում է աշխատանքային միասնական 9-ամյա դպրոց՝ երկու աստիճանով. «Ա» աստիճան՝ 1-4-րդ դասարան, «Բ» աստիճան՝ 5-9-րդ, որի բազայի վրա գործում են միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատությունները՝ Շուշիի մանկավարժական ուսումնարան

(1921-1922 ուստարում), Ստեփանակերտի գյուղտեխնիկում (1923թ.), երաժշտական ուսումնարան, որ բացել է ականավոր երաժշտագետ Ռոմանոս Մելիքյանը՝ 1923թ. հոկտեմբերին (ցավալի է, որ վերջին տարիներին մեր մամուլում նշվում է, իբր, երաժշտական ուսումնարանը գործել է 1961 թվականից): Արխիվային տվյալների համաձայն՝ 1923-1924 ուստարում մարզում գործում էին 79 առաջին և 3 երկրորդ աստիճանի դպրոցներ: Առաջին աստիճանի դպրոցներն ունեին նաև, այսպես կոչված, մանկապարտեզային կամ «գրագիտական» խմբեր, որոնք փաստորեն նախապատրաստական դասարաններ էին: Առաքել Առաքելյանի (լուսժողկոմիսար 1925-1927թթ.) բեղմնավոր գործունեության շրջանում Լեռնային Ղարաբաղի հանրակրթական դպրոցների թիվը հասնում է 134-ի, որտեղ սովորում է 7940 աշակերտ, դասավանդում՝ 212 ուսուցիչ: 1926թ. Ստեփանակերտ հրավիրված՝ մարզի ուսուցիչների 3-րդ համագումարում տված իր զեկուցման մեջ Առ. Առաքելյանը շեշտակիորեն նշում է, որ շոշափելի են մարզի լուսավորության բնագավառում ձեռք բերած նվաճումները, արդեն գործում էին 13 առաջին աստիճանի, 6 երկրորդ աստիճանի դպրոցներ, 3 տեխնիկում, կուսակցական դպրոց (հիմնադրվել է 1923թ.), մեկ նկարչական ստուդիա: Մարզում ծավալուն աշխատանք է տարվում անգրագիտության վերացման ուղղությամբ: Լուսժողկոմին կից ստեղծվում է «Անգրագիտության վերացման օժանդակ ընկերություն», որի նախագահին էր ականավոր հոգեբան, մանկավարժ Գուրգեն Էդիլյանը, որը ղեկավարում էր նաև ԼՂՀ սոցդասվարչությունը: Շատ ուսուցիչներ բնակչության անգրագիտությունը վերացնելու գործում իրենց հասանելիք աշխատավարձը նվիրում էին անգրագիտության վերացման ֆոնդին. նկատի ունենք Ս. Օհանյանին (գ. Վաղուհաս), Մ. Օհանյանին (գ. Կոճողոտ), Գ. Զլինգարյանին (գ. Շուշիքենդ), Պ. Մուսայելյանին, Թամարա Օհանյանին (գ. Սոս) և շատ ուրիշների: «Խորհրդային Ղարաբաղ» թերթը 1929թ. նոյեմբերի համարներից մեկում գրել է. «Ուսուցիչները հանդես են գալիս ոչ միայն որպես խմբակների դասատուներ, այլև անգրագիտության վերացման կազմակերպիչներ»:¹

1930-ական թվականներին ԼՂ հանրակրթական դպրոցներում արմատականորեն վերակառուցվում է ուսումնադաստիարակչական աշխատանքների համակարգը. իրականացվում է պարտադիր տարրական կրթությունը, ստեղծվում է միասնական դպրոցական համակարգ երեք աստիճանով՝ տարրական դպրոց՝ 1-4-րդ, ոչ լրիվ՝ 5-7, լրիվ՝ 8-10-րդ դասարաններ,

¹ Խորհրդային Ղարաբաղ, 1929, 21 նոյեմբերի:

մանկավարժական նոր որոնումների շնորհիվ կատարելագործվում են կրթության բովանդակությունը, ուսումնադաստիարակչական աշխատանքների կազմակերպման ձևերն ու մեթոդները: Այդ շրջանում հանրակրթական, միջնակարգ-մասնագիտական ուսումնական հաստատությունների համակարգում համալրվում է նորովի՝ իր տեսակի մեջ մարզում առաջին բժշկական ուսումնարանը և բարձրագույն ուսումնական հաստատությունը Շուշիի, իսկ հետո՝ Ստեփանակերտի երկամյա մանկավարժական ինստիտուտը (1939-1953թթ.), որն իր 13-ամյա գոյության տարիներին Արցախի դպրոցներն ապահովել է բարձրագույն կրթություն ունեցող ուսուցչական կադրերով: Ի դեպ, նշենք, որ այդ ուսումնական հաստատության հիմնադրման նախաձեռնողներն եղել են Լեռնային Ղարաբաղի լուսժողկոմներ Արտո Վարդանյանը, Հայկ Բալայանը (իրապարակախոս Ջորի Բալայանի հայրը), Գրիգոր Բազյանը, Արսեն Խաչատրյանը, Կարո Դավթյանը և շատ ուրիշ հայրենասեր գործիչներ: Արխիվային փաստաթղթերը վկայում են, որ 1938-1939 ուսումնական տարում մարզում գործում էր 193 դպրոց, որտեղ սովորում էին 28000 աշակերտներ, դասավանդում՝ 1690 ուսուցիչ (ԼՂ լուսբաժնի արխիվ, թ. ՀՕ, ց. 1, գ. 95, թ. 9):

Վերը համառոտակի շարադրանքից ակնհայտ է դառնում, որ իր բազմադարյան պատմության ընթացքում Արցախի հայագիր դպրոցը զարգացել է դպրոցի ու մանկավարժության ասպարեզի մշակույթի բնագավառի գործիչների անուրանալի ծառայությունների շնորհիվ:

Резюме

В статье на основе анализа архивных данных и статей историко – педагогического содержания, опубликованных в периодической печати кратко представлены основные этапы развития армянской школы Арцаха. Автор по-новому освещает документальные данные касающиеся анализируемой проблемы.

Summary

The article, based on the analysis of the historical data and articles with historical - pedagogical maintenance published in the periodical press, summarizes the main stages in the development of Artsakh Armenian school. The author newly highlights the documentary data concerning the problem being analyzed.